ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բ. ՄԱՏԵԱՆԻ ՌԻԹՄԱԿԱՆ ԵՒ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԲՆՈՅԹԸ

Կանոնաւորութիւնը տողի ներսում եւ անկանոնութիւնը տողը տողի յարաբերութեամբ Նարեկացու տաղաչափական համակարգի ակնառու յատկանիշներից է: Ոչ մի խորք բան չկայ, եթէ մի տող ունի այլ տաղաչափութիւն, վանկերի այլ քանակ, երկրորդը՝ այլ, երրորդը՝ նոյնպէս, իսկ չորրորդը կարող է կրկնել նախորդ տողերից մէկի չափը եւ այսպէս շարունակ: Նարեկացուն չի կաշկանդում կշռոյթը, չափը, տողի երկարութիւնը: Եթէ ցանկանում է գրել անթերի չափով, անդամների մէջ հաւասար վանկերի թուով, հաւասար տողերով, ապա գրում է այդպէս, եթէ չի ցանկանում, փոխում է ռիթմը, կշռոյթը, չափը: Զ6րդ գլխի տաղաչափական պատկերը տարակարծութեան տեղիք է տուել լոկ այն պատճառով, որ թէ Աբեղեանը եւ թէ Պապաեանը հատուածը դիտել են իբրեւ բացառապէս տաղաչափական մէկ եւ նոյն կառուցուածքով գրուած ոտանաւոր: Մինչդեռ նոյն հայրենի չափը նոյն հատուածում Նարեկացին մի դէպքում կիրառում է 8-7 բաժանմամբ, այսպէս՝ 3+2+3 // 2+3+2.

Պարտուցըն / ժխտեալ / տաղանդացն // ճեպով / մեծաւ ի / տուժի. (մէկ այլ դէպքում այսպէս՝ 7-8 վանկանի կիսատողերով)

Բիւր / քանքարոյ / խնդիր // ես չունիմ / կշիռ / մի ունկի:

Նարեկացին հայրենի չափն օգտագործել է բազմազան զուգորդութիւններով: 7-վանկանի կիսատողը կարող է լինել թէ՛ 5+2, 2+5 եւ թէ 6+4, 2+2+3 վանկերից բաղկացած, իսկ 8-վանկանի կիսատողը թէ 5+3, 3+5 եւ թէ 3+3+2, 2+3+3 վանկերից բաղկացած: Կիսատողերից կարող է պակասել վանկ եւ լրացուել ամանակի շնորհիւ, այսպէս՝

Ու / անարեւ / միգով // յամենայն / մասանց / պարփակեալ...

Այստեղ 6-վանկանի հատածն ամանակով հաւասարւում է 7-վանկի, եւ հայրենի չափը պահպանում է իր կանոնաւորութիւնը: Աբեղեանը հենց այսպէս էլ ընդունել է այն տողերը, ուր պակաս վանկեր կան: Նա կարեւոր է համարել 7-8-վանկանի կիսատողերի բաժանման եւ նրանց շեշտադրութեան պայմանը: Այս պայմանն անտեսելու դէպքում թերավանկ հայրենի տողը կարող է ընկալուել իբրեւ այլ չափով գրուած ոտանաւոր, 15-վանկանի տողը՝ այլ: Սրա մէջ է Ռ. Պապաեանի սխալը: Մինչեւ իսկ քուչակեան հայրենների անթերի տողը Պապաեանը համարում է 5-ավանկ եռանդամ / 5+5+5 / ոտանաւոր: Թէեւ միշտ չէ, որ հայրենի տողը պահպանում է 7-8 վանկանի կիսատողերի ճշգրտութիւնը, այլ վանկերի քանակը կարող է 15ի փոխարէն տատանուել 16-18 վանկերի միջեւ, բայց միշտ էլ տողն ընկալւում է իբրեւ հայրենի չափ: Դա նման է հայոց հին տաճարների առաջին հայեացքից խառն ու անկանոն, բայց միշտ սրբատաշ քարերին, ուր քարերի հաւասարութիւն չկայ, բայց կայ շարուածքի ներդաշնակութիւն:

Մատեանի տիրապետող չափերից մէկն էլ 4+5 երկանդամ չափն է, որ կարող է հանդէս գալ թէ իբրեւ առանձին տող եւ թէ կիսատող՝ այլ չափով տողի կազմութեան մէջ: Նոյնը պէտք է ասել նաեւ 5+4 երկանդամ չափի մասին:

digitised by A.R.A.R.@

9-վանկանի / 4+5 / երկանդամ՝

Վերաձայնեալ՝ ի մեծ զաւրութեան,
Խնկաւորեալ՝ յողորմածութեան,
Համբուրեցեալ՝ յանճառ հեզութեան,
Ճաշակեցեալ՝ ի խոնարհութեան...

/ Բան ՁԷ, բ /

9-վանկանի / 5+4 / երկանդամ՝

Թէ հաւասար գոյր՝ ես գրէի
Թէ զուգագործ գոյր՝ ցուցանէի,
Թէ աւրինակ գոյր՝ ես ազդէի,
Թէ յանցեալսըն՝ հայթայթէի...

/ Բան ԺԵ, բ /

Թէ՛ 4+5 եւ թէ 5+4 չափերը կազմում են նաեւ կիսատողեր: Այս դէպքում նրանք կարող են նաեւ ամանակով հաւասարուել 5+5 չափին: Ահա, օրինակ՝ 4+5 // 4+5 18-վանկանի ոտանաւոր.

Երկչոտութեամբ / կարծեաց վարանեալ, // ամենայնիւ, / կայ ի վտանգի,

Հարազատաց / դաւաճանութիւն // անհաշտելի / ի կոտորուածի...

/Բան ԻԶ, գ/

Կամ այս օրինակը, ուր 4+5 // 5+4 կիսատողերը մտնում են 20-վանկանի ոտանաւորի կառուցուածքի մէջ.

Մի՛ երկարս ինձ / զվէր մեղացս // ի յախտալից / մարմնիս ծածկեսցես,

Մի՛ զփտութիւն / նեխութեան ցաւոցս // ինձ տնկակից / մահու մնացուսցես,

Այլ քա՛րձ քանիւ / քոյդ ողորմութեան // զժանտութիւնն / ապականարար,

Որպէս զի զատեալ / ի հիւծմանց ախտից // առողջութեանն / պատրաստեցայց:

/ Բան ԽԸ, ա /

Մատեանի տաղաչափական նկարագիրը աչքի է ընկնում ոտանաւորի չափերի բազմազան կառուցուածքներով, ազատ ոտանաւորի չարահիւսական միաւորների իմաստային ինքնուրոյնութեամբ, ճարտասանական եւ արտայայտչական միջոցների հարուստ օգտագործութեամբ, որոնք էլ փոխադարձաբար պայմանաւորում են Մատեանի ռիթմական բազմերանգութիւնը, նրա դրամատիզմն ու քնարականութիւնը: Նարեկացին ոչ միայն թարմացրել է տաղաչափական աւանդական ձեւերը, ոչ միայն օգտուել է ժողովրդական երգարուեստի մաքուր ակունքներից այլեւ հանդէս է եկել իբրեւ նոր չափերի օրէնսդիր:

Մատեանն ունի նաեւ այնպիսի մասեր, որոնց ռիթմը թէեւ չի կարելի լիովին նոյնացնել արձակի հետ, բայց եւ դժուար է համարել ազատ ոտանաւոր: Աբեղեանն այսպիսի մասեր է համարում այն հատուածները, որոնց մէջ «քանաստեղծը միանման կերպով թուում է Աստծու ստորոգելիները կամ միեւնոյն միտքը յեղյեղում է տարբեր արտայայտութեան ձեւերով, բայց նման կազմութեան խօսքերով: Այս մասերի մէջ էլ, սակայն, յաճախ նա դիմում է իր սիրած ռիթմին եւ կազմում է հնգավանկ անդամներով, երբեմն եւ ուրիշ տեսակ ոտանաւորներ» (3):

Աբեղեանն իրաւացի է, եւ Մատեանի գիտաքննական նոր հրատարակութեան մէջ արձակ են տրուած ԼԴ, ՀԵ, ՂԲ, եւ ՂԳ գլուխները, ինչպէս նաեւ յիշատակարանը: Կարելի է այս գլուխներից բերել իսկապէս կանոնաւոր ռիթմով հատուածներ եւ, ընդհակառակը, տողատուած գլուխներից մասեր, որոնց ռիթմն աւելի մօտ է արձակին: Արձակին յարող այդ ռիթմին Նարեկացին դիմել է գիտակցաբար՝ Մատեանի ռիթմական հիւսուածքը բազմատարր դարձնելու նպատակով: Այդ գլուխները եւ առանձին արձակամէտ մասեր մի տեսակ միջնարարի, ռիթմի դանդաղեցման դեր են կատարում՝ բուռն ալեկոծութիւններից խաղաղեցնելով ընթերցողի հոգին, նրան մղելով խորհրդածութիւնների: Բոլոր

digitised by A.R.A.R.@

այն դէպքերում, երբ Նարեկացին դիմում է ռիթմիկ արձակի՝ նրա խօսքը հիմնականում ունի մեկնաբանական, բացատրական բնոյթ, իսկ ստորոգելիների թուարկման դէպքում՝ ներբողի:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան տաղաչափական համակարգի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ բանաստեղծն ունեցել է ռիթմի նուրբ ու խոր զգացողութիւն, օժտուած է եղել երաժշտական բացառիկ ձիրքով: Նա որոնել է եւ միշտ էլ գտել է ասելիքին համապատասխան ձեւը, երբեք չկաշկանդուելով որեւէ կանոնի նեղ շրջանակում: Նա ոչ միայն լաւագիտակ էր նախորդ դարերի հայոց բանաստեղծութեան տաղաչափական ձեւերին, այլեւ մեծ սէր եւ հետաքրքրութիւն է ունեցել ժողովրդական երգերի եւ նրանց արուեստի նկատմամբ: Թէ՛ հոգեւոր եւ թէ ժողովրդական երգերի տաղաչափական ձեւերի օգտագործմամբ՝ Նարեկացին ստեղծել է տաղաչափական նոր ձեւեր, ոտանաւորի նոր կառուցուածքներ:

Թէեւ յետագայ դարերի հայ բանաստեղծները, իսկ նոր ժամանակների բանաստեղծները առաւել եւս, միշտ էլ հաղորդակից են եղել հարեւան ու հեռաւոր շատ ազգերի գրականութիւններին, իւրացրել եւ ստեղծագործաբար ազգայնացրել են նաեւ տաղաչափական նոր ձեւեր եւ ոտանաւորի այլ կառուցուածքներ, բայց, այդուհանդերձ, հայոց ազգային տաղաչափութեան հիմնական ձեւերը, ինչպէս գրել է Մ. Աբեղեանը, «իրենց ենթատեսակներով ամենամեծ մասամբ գործածուած գտնում ենք 7-11-րդ դարերում» (4), եւ այստեղ, ասենք անվերապահորէն, մեծագոյն աւանդը պատկանում է Գրիգոր Նարեկացուն:

Ըստ Ա. Այտընեանի՝ մեր տաղաչափութեան մէջ ընտրելագոյնը եւ ազնուագոյնը համարւում են գրաբարեան ձեւերը, այնպէս որ «կրնայ այսօրուան օրըս կերպով մ'ըսուիլ, թէ արդի տաղաչափութեան լեզուն գրաբար է» (5): Գտնելով, որ «միջին դարերուս քերթուածոց մէջ առանձին տեղ մը կը գրաւեն Գրիգոր Նարեկացւոյ տաղերը», Այտընեանը միաժամանակ ընդգծում է, որ տաղերի մէջ «ինչչափ որ ճշմարիտ բանաստեղծական շարժուն ոգին իւր կենդանութեամբը՝ նախորդներէն եւ յաջորդներէն վերագոյն է, նոյնպէս ալ եզական է շնորհ՝ ինքնաստեղծ նորանշան լեզուաւն ու յատուկ դարձուածներովը, եւ մանաւանդ անով աւելի զարմանալի, որ շատ տեղեր ազգային նախնական / հեթանոսական / երգոց ճարտար նմանողութիւն է, որոնց, ինչպէս գիտենք, դեռ կենդանի ձայներն այնչափ դար ետքը կրնային ներանձնացեալ հերթողին ականջը հասած հնչած ըլլալ» (6):

Բանաստեղծի կենդանի հետաքրքրութեամբ եւ զգայուն սրտով Նարեկացին ինքն է ձգտել ոչ միայն լսել ժողովրդական բառ ու բանի, երգի ու մեղեդու մշտալուր այդ ձայները, այլեւ դրանք թրծելով իր ստեղծագործական հանճարի քուրայում՝ վերադարձրել է ժողովրդին իրրեւ գրական յուշարձաններ՝ աւանդելով դարերին ու սերունդներին:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

(շարունակելի)

ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Մ. Աբեղեան, հ. Գ, էջ 332:
2.- Տես՝ Ռ. Պապայան, Ազվ. յօդվ., էջ 194-195:
3.- Մ. Աբեղեան, հ. Ե, էջ 323:
4.- Նոյն տեղում, էջ 332:
5.- Ա. Այտընեան, Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 428:
6.- Նոյն տեղում, էջ 425-426:

digitised by A.R.A.R.@